

ինչպէս բերդը, այնպէս և գիւղը կոչուել են սև բերդ՝ Կարա-Կալար
Ղորուխ-գիւնէլ. — ($62^{\circ} 11' 30'' - 40^{\circ} 37' 57''$). — Անտառապատ մի
փոքրիկ գիւղ է, բնակիչները շիա թուրքեր են. 32 տուն, 131
ար. 128 իգ. միասին 259 հոգի. Պարապում են անասնապահու-
թեամբ և երկրագործութեամբ:

Ուաշիկ. — ($62^{\circ} 12' 10'' - 40^{\circ} 38' 25''$) — Անտառապատ մի փոք-
րիկ գիւղ է, բազմաթիւ աղքիւրներով, որոնք միանալով թափ-
ւում են Զանգուի մէջ. Բնակիչները շիա թուրքեր են, 90 տուն,
240 ար. 185 իգ. միասին՝ 425 հոգի. Պարապում են անասնա-
պահութեամբ և երկրագործութեամբ:

Կարախլու. — ($62^{\circ} 14' 35'' - 40^{\circ} 35' 10''$). — Անտառի մէջ զետեղ-
ուած մի փոքրիկ, աննշան գիւղ է, Բնակիչները շիա թուրքեր
են, 23 տուն, 98 ար. 83 իգ. միասին՝ 181 հոգի. Պարապում են
անասնապահութեամբ և երկրագործութեամբ:

Դարա-կիշլաղ. — ($62^{\circ} 15' 20'' - 40^{\circ} 36' 50''$). — Զանգուի աջ ափին
մի փոքրիկ բլրակի վրայ գետեղուած աննշան գիւղ է, շիա թուրք
բնակիչներով, 56 տուն 248 ար. 180 իգ. միասին՝ 428 հոգի. Պա-
րապում են անասնապահութեամբ և երկրագործութեամբ:

Կորչուլու. — ($62^{\circ} 16' 20'' - 40^{\circ} 36' 55''$). — Զանգու գետի ձախ ափին,
փոքրիկ հարթութեան վրայ, անտառապատ մի փոքրիկ գիւղ է,
47 տուն շիա թուրք բնակիչներով, 170 ար. 130 իգ. միասին՝
300 հոգի. Պարապում են անասնապահութեամբ և երկրագործու-
թեամբ:

Սոյիւդ-բուլաղ. — ($62^{\circ} 20' 50'' - 40^{\circ} 7' 2''$). — Մի սառնորակ, յորդ
աղքի եղբին, Ալիբէկ լեռան լանջին զետեղուած, անտառապատ
փոքրիկ գիւղ է, ուր զեռ ևս մնում են Հայկական մի կիսաւեր
եկեղեցի և մի քանի հինաւուրց խաչքարեր. Բնակիչները եղիղի-
ներ են, 35 տուն 153 ար. 143 իգ. միասին 296 հոգի. Պար-
ապում են անասնապահութեամբ և երկրագործութեամբ:

Դալի փայտ կամ Փաշարիանդ. — ($62^{\circ} 20' 7'' - 40^{\circ} 34' 55''$). — Զան-
գուի ձախ ափին, մի փոքրիկ հարթութեան վրայ, անտառապատ
գիւղ է, շիա թուրք բնակիչներով. 90 տուն, 353 ար. 320 իգ.
միասին 673 հոգի. Պարապում են անասնապահութեամբ և եր-
կրագործութեամբ, նաև մեղուաբուծութեամբ. Գիւղում կայ Հայ-
կական մի եկեղեցու աւերակ.

ԱՐՁԱՔԵՆՏԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ալափարս. — ($62^{\circ} 17' 54'' - 40^{\circ} 25' 22''$). — 23 գեսետին տա-
րածութեամբ փուլած է մի հարթութեան վրայ, որի հարաւային

կողմում բարձրանում է մի բլուր, կրելով մի հին ամրոցի որմանպատեր: Արևելքան կողմում էլ բդիսում է մի յորդ սառնորակ աղբիւր, ջուր մատակարարելով ամրող գիւղին:

Ուշագրաւ է նախ Շիրանառը անուամբ մի ուխտատեղի, — մի սրբատաշ եկեղեցու կիսակործան պատեր, որոնցից մինի վրայ կարգացում է: Եւ յորժամ եղել թուականիս թորզումնան Յ. Ժ. *) կամակն Սատուծոյ խորանս... Գլխոր իշխան...

Մըրա մօս է մի անշուրք, հին եկեղեցի ս. Վարդան անունով, ուր պահուում է 1830 թ. Մակուայ համանուն եկեղեցուց բերուած մի կլոր բար՝ աւանդութեան ասելով ներկուած ս. Վարդանի արիւնով: Ամեն տարի Գիւտ խաչի տօնին ահագին բաղմութիւն է դալիս այստեղ ուխտ:

Մի սրբատաշ եկեղեցի էլ շինուած է 1893 թ. ս. Աստուածածնի անունով:

Բնակիչները բոլորը հայեր են՝ Խոյից, Մակուից, Վեդիայից և Աւաջուղից 1830 թ. գաղթած. ընդամենը 396 տուն. 1384 ար. 1305 իգ. ի միասին 2689 հոգի: Այս գիւղացիների մէջ գաղթականութիւնը շատ տարածուած է, միայն երեանում 60 տնից աւելի տառերով պարապողներ կան Գաղթականութեան շնորհիւ մտաւոր զարգացումն էլ համեմատաբար բարձր է: ունին մի եկեղեցական-ծիսական դպրոց:

Պարտում են երկրագործութեամբ, այգեպանութեամբ, անասնապահութեամբ և առեստով: Ունին 10 դ. 768 ք. սաժէն տարածութեան այգիներ, 2309 դ. 1888 ք. սաժէն վարելահող և 693 դ. 2228 ք. ս. արօտատեղի:

Հոչակուած է այստեղի ցորենը:

Գիւղացիներից շատերը պարտում են նաև ոչխարի մորթուց մուշտակ կարելով, որ ծախուում է մինչև 20 րուբլիով:

Ամառները երեանից հայեր այստեղ ևս գալիս են ամառանոց:

Բջնի. (62° 18' 50"—40° 27' 45").—Տեղաւորուած է մի քարքարոս ձորակում, որի միջով ոլորապայտ հոսում է Զանգու գետը. Աւաղին քարաժայռեր պատում են գիւղի արենելեան և հարաւային կողմերը, և մերկ, սրածայր բլրակներ ձգւում հիւսիսային կողմում: Ջորակն արևելքից դէպի արևմուտք հետզհետէ լայնանում է և շատ զեղեցիկ տեսք ստանում: Զանգուի եղբերը

պատաժ հն մեծ մասամբ վանակատի և հասարակ դեղին մարմարիոնի հանգերով, որոնք արելի ճառագայթների տակ փողփողում են: Գիւղի արևելեան կողմը բարձրանում է մի հինաւուրց ամրոց, իսկ հիւսիսային կողմում, բլրակի լանջին հոչակառոր և Աստուածածնի վանքը *): Գիւղական անշուր տները բռնելով հիւսիսային բլրակի և արևելեան բառաժայոի լանջերը՝ այժմ կառուցւում են արևմտեան կողմում բացուրդ հովտի մէջ:

Գիւղը բռնում է 32 դ. 960 ք. ս. տարածութիւն, որից 20 դ. 1920 ք. ս. գտնուում է շինութիւնների տակ:

Ամրոցը շինուած է գիւղի արևելեան կողմը բարձրացող բլրի զագաթին: Սա երեք կողմից էլ շրջապատուած է Զանգուգետուած: Պարբորդ, հււսիսային կողմում եղել հն աշտարակներ և միակ դուռը՝ Պահլաւունեաց տոհմի այս Համբակուռա ամրոցը պատած է եղել հաստ պարսպով, որի մի մասը գիւղացիները բանդել են, քարերը իրենց շինութիւնների վրայ գործածելու:

Ամրոցի մէջ կայ մի աւեր եկեղեցի, որ աւանդաբար Ս. Խաչ է կոչում, ջրի մի աւազան և մի ստորեկրեեայ անցք, որ իշխում է մինչև Զանգուգետուածը: Նկատելի հն տների հիմնապատեր:

Բջնի գիւղը յիշատակուում է գեռ հինգերորդ դարի երրորդ քառորդում Ղազար Փարագեցուց իրրև և բնակչի գիւղը: Յայտնի չէ թէ Երր այս գիւղը դարձել է Պահլաւունի տան սեպհականութիւն, միայն Ժ զարի առաջին կիսում առաջին անգամ յիշատակուում է, որ Բջնիի տէր Վասակ Պահլաւունին՝ Հողում մականուանուած՝ Դեմքեաց յարձակման միջոցին քաջարար պատերազմել է նրանց դէմ, միայն յետոյ մի դարանակալից, սպանուել է Սերկելի լերայ քնած ժամանակ)**),

Մի կարճ միջոցից յետոյ, Վասակ Պահլաւունու որդի Գրիգոր Մագիստրոսը նոյնպէս 1043 թուին թուրքաց ասպատակութիւնների ժամանակ իւր զօրքով բանակ է դրել այս Բջնումուն՝ Հրազդանի ափին, և սաստիկ պատերազմելով յաղթել է պարաից զօրքին և շատ իշխանների ձերբակալել, իսկ զօրքը փախցրել Պարսկաստանը ***):

Այս միջոցներին Բջնին գտնուել է բաւական բարգաւաճ դրութեան մէջ և բաղաք կամ բերդաքաղաք կոչուել:

Սակայն Բագրատունեաց հարստութեան անկման ժամանակ այս բաղաքն ընկել է, որովհետեւ 1045 թուին նրա տէր

*) Տես նշանաւոր վանքերի նկարագրութեան մէջ.

**) Արիստուկիս Լոռակիկրտացի Ժ. Վարդան ՄԵ.

***) Մատթէսո Ռւենյեցի:

Գրիգոր Մագիստրոսը յանձնել է Յունաց կայսեր և նրա վոխարէն ստացել Միջազէտքում գիւղեր և քաղաքներ։ Այսուհետեւ մինչև ժԴ. դարը Բջնիի մասին ոչ մի առանձին յիշատակութիւն չկայ, միայն պարզէ, որ շրջակայ գաւառների հետ միասին սա և ընկել է Պարսից տիրապետութեան ներքոյ, որից 1201 թ-իւնել են Զաքարէ և Խվանէ սպասալարները, որոնց տոհմը այսուհետեւ տիրապետել է սրան 1358 թուին այս տոհմից՝ Աթարակ Շահինշահի որդի Աթարակ Զազան պատերազմել է Պարսից Մէլիք Աշրափի հետ, որ «Բջնի քաղաքը իւլել էր, քաղաքը հիման ցքակել, շատ անուանի մարդ սրի քաշել և եկեղեցիները տապալիլ», և յետ է խել Բջնին, ժողովրդին հարկից և ծառայութիւնից ազատ կացուցել և նորոգել եկեղեցին *):

Այս վերանորոգութիւնից զրեթէ յետոյ 1387 թուին Բջնին և նորարկուել է Լանկթամուրի աւերածութեան, իաղմուր անուն մի զօրապետ Շխարհակ զամուրն Բջնոյ էտ զնա, և սպան զիալիսկոպոս աշխարհին զՏէր Վանական, որ էր այր իմաստուն և գիտնական և ողործած և գթած ասենայն աղբատաց **):

120 տարուց յետոյ Բջնին յիշւում է այս՝ ռաստուածաբնակ և անառիկ դղեակ Բջնուռ երկնանման աթոռ ս. Աստուածածնի եպիսկոպոս Գրիգորի 17 տարու և 6 ամսուայ ընթացքում արտադրած աւետարանի յիշատակարանում 1478 թուին, որից յետոյ դարձեալ մոռացութեան է տրում մինչև Ժէ դարի սկիզբը, Ճէլալեանց ասպատակութիւնների միջոցը, երբ սրանց աւերածութիւնների պատճառով այնպիսի սոսկալի սովոր էր ընկել այս կողմերում, որ մինչև անզամ մի քանի կանայք մարդիկ էին դաւում, սպանում և հփում ուտում ***):

Այսուհետեւ կրկին պատմութիւնը լրում է այս մասին մինչև ժԹ. դարի երեսնական թուականները, երբ տաճկահայ գաղթականութեան միջոցին Վանի վիլայէթի Արծափ և Քոռամուսուն գիւղերից հայեր գաղթեցին այստեղ և շէնացրին, Յայտնի չէ թէ ինչ հանգամանքներով այս գիւղը դեռ Պարսից աիրապետութեան միջոցին պատկանելիս է եղել երևանցի Գեղամեան տոհմին, որից Արսէն Սուլթանը 1876 թուին Կէորդ Դ. կաթուղիկոսի օրով վաճառեց ս. էջմիածնին 75,000 ըուբլիով:

Բջնիի այժմեան բնակչիները հայեր և թուրքեր են, ընդա-

*) Եկեղեցու վրայի արձանագրութիւնից:

**) Բովզա Մոծովինցը, յիշ. Ալիշան. Սիսական, եր. 274.

***) Առաքել պատմ. գլ. Եւ

մենը 290 տուն 828, ար. 815 իդ. միասին 1643 հոգի. սրանցից հայեր են 150 տուն, 412 ար. 405 իդ. միասին՝ 817 հոգի, թուրքեր՝ 140 տուն, 416 ար. 410 իդ. միասին՝ 826 հոգի. Պարապում են երկրագործութեամբ և անտառապահութեամբ. Ունին ամբողջովին էջմիածնապատկան 1540 դ. 174 ք. ս. վարելահող, 16 դ. անտառ, 565 դ. 800 ք. ս. խոտասեղի և 2788 դ. 1740 ք. ս. արօտատեղի:

Արգաքնած հնուժը Արտազական. ($62^{\circ} 15' 55'' - 40^{\circ} 27' 7''$). Կալուածատիրական մի փոքրիկ գիւղ է, 11 դեսեատին տարածութեամբ, երկու ձորակների միջավայրում. Գիւղում ուշադրութեան արժանի առանձին բան չկայ, բացի մի հասարակ եկեղեցուց և ս. Գէորգ անուամբ մի մատուռից: Աւելի ուշագրաւ է $1\frac{1}{2}$ կիլոմետր հեռաւորութեամբ, արևմտեան կողմի երկու ձորակներով մեկուսացած, անտառապատ բլրի վրայի նիզուսի ս. Աստուածածին վանքը *) շրջապատուած տների հիմնապատերով ու խաչքարերով:

Վանքի արևմտեան կողմը կայ մի կէսաւեր մատուռ:

Արգաքնածի բնակիչները բնիկ հայեր են. 170 տուն, 666 ար. 662 իդ. ի միասին 1328 հոգի: Պարապում են երկրագործութեամբ, անտառապահութեամբ և մասամբ այգեպանութեամբ: Ունին 927 դ. 1199 ք. ս. վարելահող, 1308 դ. 1439 ք. ս. արօտատեղի, միայն մի դեսեատին այգի: Գիւղի շուրջը պատաժ է 586 դ. 2398 ք. ս. տարածութեամբ անտառ:

Դալլեար.—($62^{\circ} 15' 30'' - 40^{\circ} 29' 24''$). — Կալուածատիրական մի փոքրիկ գիւղ է, որ մէպէտ 12 դ. 1440 ք. ս. տեղ է բռնում, սակայն տները կուտակուած են միայն 6 դեսեատինի վրայ: Շըրջապատուած 1284 դ. 1472 ք. ս. տարածութեան հիմնալի անտառով և բազմաթիւ ծաղիկներով, զերծ չէ մնացել մեր սուրբ հայրերի աչքերից, որոնք մի վանք են կառուցել այստեղ:

Միայն մի քանի կցկուուր արձանագրութիւններ գեռ ես պահում են այդ վաղեմի սրբավայրի յիշատակը: —

Տաճարի վրայ.

Կամաւն Աստուծոյ մեղատրս Սարգիս վարդապետ, ող առաջնորդ եղէ եւ շինեցի զուրբ Աստուածածինս եւ ետու զորած այգին եւ ննծան ի Ծէնգակիթ եւ զիմ քաժին այգին ի Զիթենիա... Հայրս եւ եղարքս հաստատեցին ի տարին Ժ. աւը ժամ. ով խափանէ...»

*) Տես նշանաւոր վանքերի նկարագրութեան բաժնում:

Սրանից բարձր.

Կաման Աստուծոյ ես Քահանայապետ եւ ղասապետս Միաբանեցաք սուրբ ուխտիս... Եշտարակայ այզոյ գննծանս շինեցաք եւ այլ ինչս տվաք եւ միաբանքս հաստատեցին... Բ. պատարագ ի թվիս ՈՃԶ^{*)}:

Սրանից էլ բարձր:

Կաման Աստուծոյ ես Մեսորովք երէց զնեցի զՇատրյսնց այզոյն չարէն... Ի՛մ. դահեկան, եւ ետու սուրբ Աստուածածինս, եւ սպասաւորս ետուն Բ. պատարագ ի տարոջն, ով խափանէ, իմ մեղացն պարտական...

Դալլիս գիւղի այժմեան բնակիչները թուրքեր են, 65 տուն, 196 ար. 189 իգ. ի միասին 281 հոգին Պարապում են երկրագործութեամբ և անամսապահութեամբ: Ունին 149 դ. 2080 ք. ս. վարելահող, 160 դ. 950 ք. ս. խոտասեղի և 2521 դ. 1462 ք. ս. արօտատեղի:

Ախվեռան.—($62^{\circ} 10' 40''$ — $40^{\circ} 30' 57''$). — Տեղաւորուած է Ալիբէկ լեռան լանջին, մի ձորակի մէջ, որի միջով հոսում է մի գետակ, սկիզբն առնելով Ալիբէկ լեռից: Բոնում է 2 դ. 960 ք. ս. տարածութիւն: Բնակիչները շիա թուրքեր են, 71 տուն, 212 ար. 204 իգ. միասին՝ 416 հոգի: Պարապումքը նոյնն է. ունին 190 դ. 1689 ք. ս. վարելահող և 1024 դ. 2067 ք. ս. արօտատեղի, զիւղի շուրջը կայ 616 դ. 1600 ք. ս. տարածութեամբ արքունական անտառ:

Օգանլար.—($62^{\circ} 15' 10''$ — $40^{\circ} 24' 28''$). — Տեղաւորուած է Զանգի գետի ձախ ափին, և բաւական գեղեցիկ տեսք ունի, բռնում է 2 դ. 1920 ք. ս. տարածութիւն: Գիւղում կայ ծծմբային ջրի մի աղբիւր, որ բոլորովին անխնամ է թողնուած: Բնակիչները շիա թուրքեր են, 66 տուն, 181 ար. 176 իգ. միասին 357 հոգի: Պարապումքը նոյնն է: Ունին 288 դ. 1920 ք. ս. վարելահող և 221 դ. 211 ք. ս. արօտատեղի:

Գիւղուց, հնումը, Կարենիս ($62^{\circ} 16' 8''$ — $40^{\circ} 23' 28''$). — Մի փոքրիկ գիւղ է 3 դ. 480 ք. ս. տարածութեամբ, որի մէջ կայ մի հայկական հինաւուրց եկեղեցու աւերակ: Այստեղից փոքր ինչ հեռու, ձորակի մէջ բարձրանում է կարենավանքը, որ այժմ բոլորովին անխնամ է թողնուած ^{**}):

^{*)} 1207 թ.

^{**) Տես վանքերի նկարագրութեան բաժնում:}

Գիւմուշ գիւղի այժմեան բնակիչները շիա թուրքեր են։ Պարսկաստանից, 71 տուն 224 ար. 215 իդ. ի միասին՝ 439 հոգի։ Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ։ Ունին 353 դ. 960 ք. և վարելահող և 483 դ. 2016 ք. ու արօտատեղի։

ԹԵԱՆՔԵԱՆԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Թեանքեանի գիւղական համայնքը, որ բռնում է նախկին Մազագ գաւառի մի մասը, ներկայացնում է մի բարձրաւանդակ, կարտուած Ահմանկան լեռնաշղթայի ճիւղերով։ Երկիրն ընդհանրապէս բարքարոս է, լեռներն մերկ և ապառաժոտ, շատ տեղեր ծածկուած անտգին կարկաներով։ Տեղ տեղ երևում են լեռնային գոգաւորութիւններ՝ ծածկուած աղքատ բուսականութեամբ, անձայսպիսի տեղերում զետեղուած են փոքրիկ գիւղեր, որոնք հազիւ հազ կարողանում են իրենց զոյութիւնը պահպանելի լեռներից ամենանշանաւորը Շամիրամայ լեառն է, որ այժմ կոչում է Հաղիս, այսինքն մեծ, առաջաւոր, 8337 ստնաչափ բարձրութեան։ Լեառը լերկ է, անշուշա հրարդարային, զուրկ բուսականութիւնից, գագաթին կայ մի հինաւուրց փոքրիկ ամրոցի հետք և մի քայր։

Երկրորդ նշանաւոր լեառը Թօթան—դաղն է, որ այսպէս է կոչուել, որովհետեւ բոլոր լանջերին ըոթանը այսինքն գութանը բանում է, մշակելի է։ Բարձրութիւնն է 7581 ստնաչափ։

Այս ամբողջ բարձրաւանդակի վրայ հչ մի գետ կամ գետակ չկայ և նոյն իսկ աղբիւրներ չափազանց սակաւաթիւ են։ Գարնան սկզբին, երբ հալչում է ձիւնը՝ հազարաւոր վտակներ վազում են լիռների գագաթներից դեպի ներքեւ, գոգաւորութիւնները և բնական լճակներ կազմում, ինչպէս Օճախլուն՝ Թեանքեանի մօտ։ Տեղացիներն էլ ամրան համար ջուր տնտեսելու նպատակով բոլոր գիւղերի մօտ՝ առանց բացառութեան՝ մի կամ մի քանի մեծ աւազաններ են շինել 20—50 մետր լայնութեան և 1—3 մետր խորութեան, ուր ամբարւում է այդ վտակների ջուրը՝ առաւելապէս կենդանիներ ջրելու Սակայն աշնանը և ձըմքանը, երբ սաստիկ ցրտից ամեն ինչ սառչում է և մօտ 1^{1/2} մետր բարձրութեան ձիւն նստում ու սաստիկ քամին անազին բուք բարձրացնելով կտրում ամեն տեսակ հաղորդակցութիւն, խեղճ տեղացիները ձիւնը լցնում են կաթսաները, դնում կրակին հալում և այդ ջուրը գործածում, իսկ կենդանիները ջրելու համար պատրաստում են «կարլիխ»—ձիւնանոց։ Սա երկու մետր